ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արտեմ Ասատրյանի՝ 2017թ. նոյեմբերի 16-18-ը Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը՝** Արտեմ Ասատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստանի Դաշնություն, 16-18 նոյեմբերի, 2017թ.

4. **Հրավիրող կողմը՝** Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) գործադիր կոմիտե, ՌԴ աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարություն

5. **Գործուղման նպատակը՝** Մասնակցություն ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության աշխատանքի, միգրացիայի և սոցիալական պաշտպանության խորհրդակցական խորհրդի հոբելյանական 30-րդ նիստին

   2017 թվականի նոյեմբերի 17-ին Սանկտ Պետերբուրգում (ՌԴ) տեղի ունեցավ ԱՊՀ անդամ պետությունների աշխատանքի, միգրացիայի և սոցիալական պաշտպանության խորհրդակցական խորհրդի (ԽԽ) հոբելյանական 30-րդ նիստը:

   ՌԴ աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարար Մաքսիմ Տոպիլինի նախագահությամբ անցկացվող հանդիպմանը մասնակցեցին ԽԽ անդամներ (նախարարներ) Հայաստանից, Բելառուսից, Ղազախստանից, Ղրղզստանից, Թուրքմենստանից, Ուզբեկստանից, իսկ Ադրբեջանից և Տաջիկստանից նիստին մասնակցեցին իրենց երկրների ԽԽ անդամների լիազոր ներկայացուցիչները: Մոլդովան նիստին ներկայացված չէր: Նիստին մասնակցում էին նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության, Արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի, ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի, Միջպետական վիճակագրական կոմիտեի և ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչները:

   Հանդիպմանը ներկա էր նաև ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահ, գործադիր քարտուղարի տեղակալ Կոնիսբեկ Ժուսուպբեկովը, ով ներկայացրեց ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահ, գործադիր քարտուղար Սերգեյ Լեբեդևի ուղերձը նիստի մասնակիցներին: Կ. Ժուսուպբեկովը ներկայացրեց նաև ԽԽ

29-րդ նիստի (2016թ.) արդյունքում ընդունված որոշումների կատարման ընթացքը և 2017թ. ԱՊՀ կանոնադրական մարմինների կողմից (ԱՊՀ տնտեսական խորհուրդ, Արտաքին գործերի նախարարների խորհուրդ) սոցիալ-աշխատանքային բնագավառում ընդունված փաստաթղթերը:

Բացման խոսքով հանդես եկած մասնակիցների ելույթներում ընդգծվեց այն հանգամանքը, որ ԱՊՀ-ն ձևավորումից ի վեր բավականին ծավալուն աշխատանք է իրականացրել ԱՊՀ տարածքում սոցիալ-աշխատանքային ոլորտում գործընթացների կարգավորման առումով, սակայն, հաշվի առնելով արդի փոփոխվող մարտահրավերներն ու ի հայտ եկող խնդիրները, հարկավոր է ջանքեր գործադրել համարժեքորեն արձագանքելու իրավիճակին և որդեգրելու նորարարական և համաչափ մոտեցումներ ծառացած խնդիրների լուծման համար:

Այնուհետև, զեկույցով հանդես եկավ Ղրղզստանի աշխատանքի և սոցիալական զարգացման նախարարը՝ որպես նախագահող երկիր, ով ներկայացրեց սոցիալ-աշխատանքային բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության վերջին զարգացումներն ու արդյունքները, ինչպես նաև հեռանկարային խնդիրներն ու փոխգործակցության ուղիները: Ի թիվս այլոց, խոսվեց մինչև 2020 թվականն ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության իրականացման, ԱՊՀ մասնակից պետությունների միասնական աշխատանքային շուկայի փուլային ձևավորման հայեցակարգի, ինչպես նաև աշխատանքային միգրացիայի կարգավորման և միասնական աշխատաշուկայի ձևավորման 2017-2020 թվականների առաջնային գործողությունների մասին:

6. Քննարկված թեմաները

Հանդիպման ընթացքում քննարկվեց շուրջ քսան հարց, որոնք, մասնավորապես, վերաբերում էին ԱՊՀ երկրների սոցիալ-աշխատանքային բնագավառում համագործակցությանն ու հեռանկարային խնդիրներին, պետությունների սոցիալ-աշխատանքային իրավիճակին և ոլորտում ձեռնարկվող միջոցներին, ինչպես նաև ընտանեկան և ժողովրդագրական քաղաքականությանն ու կանանց և երեխաների հիմնահարցերին:

Պետությունների ներկայացուցիչները մտքեր փոխանակեցին նաև արդի իրականությանն ԱՊՀ ադապտացման և կազմակերպության շրջանակներում ընդունված սոցիալ-աշխատանքային և միգրացիայի ոլորտների փաստաթղթերի գույքագրման վերաբերյալ: Կարծիքների փոխանակում տեղի ունեցավ նաև

բնակչության զբաղվածության և աշխատանքային միգրացիայի բնագավառում օրենսդրության մոտարկման սկզբունքների մասին Համաձայնագրի նախագծի վերաբերյալ:

Խորհրդի նիստում քննարկված հարցերի մի մասն ուղղակիորեն կապված էր մինչև 2020թ. ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության երրորդ փուլի (2016-2020թթ.) իրականացման գործողությունների ծրագրի կատարման հետ, այդ թվում՝ ԱՊՀ մասնակից պետությունների նախարարությունների և գերատեսչությունների մասնագետների ուսումնական այցերի և պրակտիկայի կազմակերպում՝ աշխատանքի, միգրացիայի և զբաղվածության ոլորտում հմտությունների կատարելագործման և փորձի փոխանակման նպատակով, համագործակցություն բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական դաշտի կատարելագործման հարցում, տեղեկատվական-մեթոդաբանական և նորմատիվ-իրավական նյութերի փոխանակում և ԱՊՀ երկրների մասնագիտական ստանդարտների մշակման և կիրառման ընդհանուր սկզբունքների մշակում:

Ընդհանուր աշխատաշուկայի ձևավորման և աշխատանքային միգրացիայի կարգավորման վերաբերյալ քննարկումների շրջանակներում տեսակետներ փոխանակվեցին ԱՊՀ երկրների միջև համագործակցության ընդհանուր սկզբունքների մշակման մասին՝ բնակչության որոշակի խմբերի (երիտասարդներ, հաշմանդամություն ունեցող անձինք, կանայք) զբաղվածության հնարավորությունների ապահովման նպատակով, ինչպես նաև բնակչության զբաղվածության պետական ծառայությունների համագործակցության մասին համաձայնագիր մշակելու, թափուր աշխատատեղերի առկայության վերաբերյալ երկրների ազգային տվյալների շտեմարանների ստեղծման, ազգային աշխատաշուկայի իրավիճակի վերաբերյալ ցուցանիշային համակարգի բարելավման վերաբերյալ:

Բացի այդ, հանդիպման ժամանակ քննարկվեց կենսաթոշակային ապահովության ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին 1992 թվականի մարտի 13-ի Համաձայնագրի իրականացման և դրա հեռանկարային վերափոխմանը վերաբերող հարցը, ինչպես նաև մի շարք այլ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Օրակարգի 3-րդ՝ «ԱՊՀ պետություններում սոցիալ-աշխատանքային իրավիճակը և ձեռնարկվող միջոցները» և 4-րդ՝ «ԱՊՀ մասնակից պետություններում ընտանեկան և ժողովրդագրական քաղաքականության միջոցների իրականացում, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանություն» կետերի շրջանակներում հանդես եկա ելույթներով և ներկայացրեցի ՀՀ-ում բնակչության զբաղվածության, աշխատանքի, սոցիալական աջակցության, կենսաթոշակային ապահովության, հաշմանդամության, տարեցների իրավունքների պաշտպանության, ժողովրդագրական քաղաքականության, ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառներում զարգացումները, իրականացվող բարեփոխումներն ու ծրագրերը:

Ընդհանուր առմամբ, ելույթները մեծ հետաքրքրություն առաջացրեցին մասնակից պետությունների ներկայացուցիչների շրջանում, որոնք աշխատանքային կարգով խնդրեցին առավել մանրամասն տեղեկատվություն տրամադրել ՀՀ-ում իրականացվող սոցիալական որոշակի ծրագրերի և նախաձեռնությունների վերաբերյալ՝ դրանք ուսումնասիրելու և իրենց երկրներում հնարավորինս ներդնելու նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Օրակարգի կետ 1
Խորհրդակցական խորհրդի 29-րդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին զեկուցեց ԱՊՀ գործադիր կոմիտեն:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.
Ի գիտություն ընդունել ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության աշխատանքի, միգրացիայի և սոցիալական պաշտպանության խորհրդակցական խորհրդի հերթական 29-րդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը:

Օրակարգի այս կետի շրջանակներում հակիրճ ներկայացվեցին նաև ՌԴ և Մոլդովայի վետերանների կազմակերպություններից ԱՊՀ գործադիր կոմիտեին ուղղված նոր առաջարկությունները (ՀՄՊ մասնակիցների ազատում բոլոր տեսակի հարկերի և բնակկոմունալ ծառայությունների համար վճարներից, նյութական արտոնությունների սահմանում ՀՄՊ տարիներին աշխատած և մեդալներով պարգևատրված թիկունքի աշխատավորների համար և այլն):

Որոշվեց ստացված նոր առաջարկները քննարկել համապատասխան միջպետական աշխատանքային խմբի շրջանակներում:

Օրակարգի կետ 2
Սոցիալ-աշխատանքային ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության արդյունքները ներկայացրեց Ղրղզստանը՝ որպես 2016թ. նախագահող:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.
Ի գիտություն ընդունել սոցիալ-աշխատանքային ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը և խնդրել ԱՊՀ գործադիր կոմիտեին՝ նշված տեղեկատվությունը տեղակայել ԱՊՀ գործադիր կոմիտեի կայքում:

Օրակարգի կետ 3
ԱՊՀ մասնակից պետություններում սոցիալ-աշխատանքային ոլորտի իրավիճակի և այդ ոլորտում ձեռնարկվող միջոցների վերաբերյալ ելույթով հանդես եկան Խորհրդակցական խորհրդի անդամները:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.
Ի գիտություն ընդունել Խորհրդակցական խորհրդի անդամների ներկայացրած տեղեկատվությունը և խնդրել ԱՊՀ գործադիր կոմիտեին՝ նշված տեղեկատվությունը տեղակայել ԱՊՀ գործադիր կոմիտեի կայքում:

Օրակարգի կետ 4
ԱՊՀ մասնակից պետություններում ընտանեկան և ժողովրդագրական քաղաքականության միջոցների իրականացման, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության վերաբերյալ ելույթով հանդես եկան Խորհրդակցական խորհրդի անդամները:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.
Ի գիտություն ընդունել Խորհրդակցական խորհրդի անդամների ներկայացրած տեղեկատվությունը և խնդրել ԱՊՀ գործադիր կոմիտեին՝ նշված տեղեկատվությունը տեղակայել ԱՊՀ գործադիր կոմիտեի կայքում:

Օրակարգի կետ 5
««ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության աշխատանքի, միգրացիայի և սոցիալական պաշտպանության խորհրդակցական խորհրդի կազմավորման մասին» 1992 թվականի նոյեմբերի 13-ի **Համաձայնագրում** փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **արձանագրության** ուժի

մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի մասին զեկուցեց ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչը:

Արձանագրությունը ստորագրվել է 2016թ. հոկտեմբերի 28-ին: Փաստաթղթով նախատեսվում է ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության աշխատանքի, **միգրացիայի** և սոցիալական պաշտպանության խորհրդակցական խորհրդի վերանվանում, և համապատասխանաբար, ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության աշխատանքի, **զբաղվածության** և սոցիալական պաշտպանության խորհրդակցական խորհրդի ստեղծում: Արձանագրությամբ նախատեսվում են նաև որոշ խմբագրական փոփոխություններ և լրացումներ Համաձայնագրի տեքստում:

Վերը նշված Արձանագրության ուժի մեջ մտնելու համար ներկայումս իրականացվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան ներպետական ընթացակարգերը: Ակնկալվում է, որ մինչև 2017թ. վերջը հնարավոր կլինի ավարտել ընթացակարգերը, ինչի մասին հաղորդվեց նիստի մասնակիցներին:

Հարցի վերաբերյալ ընդունվեց **որոշում,** ըստ որի *Խորհրդակցական խորհրդի անդամներին (Հայաստանի Հանրապետություն, Ղրղզստանի Հանրապետություն, Տաջիկստանի Հանրապետություն) առաջարկվեց աջակցել Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի անցկացման արագացմանը:*

Օրակարգի կետ 6
ԱՊՀ շրջանակներում սոցիալ-աշխատանքային և միգրացիայի ոլորտում համագործակցությանն առնչվող փաստաթղթերի ինվենտարիզացիայի վերաբերյալ զեկուցեց Գործադիր կոմիտեն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ուսումնասիրել էր հարցի առնչությամբ ԱՊՀ գործադիր կոմիտեից նախապես ստացված նյութերը և ինվենտարիզացիայի ենթակա առաջարկվող փաստաթղթերի վերաբերյալ առարկություններ չէին ներկայացվել: Այդ պատճառով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի անունից ստորագրվել և ԱՊՀ գործադիր կոմիտե էր ներկայացվել «Անկախ Պետությունների Համագործակցության պայմանագրային-իրավական բազայի ինվենտարիզացիայի վերաբերյալ առաջարկությունների մասին» ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության աշխատանքի, միգրացիայի և սոցիալական պաշտպանության խորհրդակցական խորհրդի որոշումը:

Հարցի վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը.
Ի գիտություն ընդունել ներկայացված տեղեկատվությունը և կարևորել, որպեսզի Խորհրդակցական խորհուրդը կենտրոնանա այնպիսի նախագծերի մշակման վրա, որոնք կարող են ավանդ ունենալ աշխատանքային հարաբերությունների, սոցիալական գործընկերության, աշխատանքի պաշտպանության, աշխատաշուկայի և բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցության ընդլայնման, ինչպես նաև պրակտիկ հարցերի լուծման և միջգերատեսչական փոխգործակցության հարցում:

Օրակարգի կետ 7
«ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության զբաղվածության և աշխատանքային միգրացիայի բնագավառում օրենսդրության մոտարկման սկզբունքների մասին» համաձայնագրի նախագծի համաձայնեցման վերաբերյալ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ամփոփելով փաստաթղթի մշակման մեջ ներգրավված մյուս գերատեսչությունների կարծիքները (ՀՀ ԱԳՆ, ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայություն և այլն), ԱՊՀ գործադիր կոմիտեին փոխանցելու նպատակով ՀՀ կառավարություն էր ներկայացրել **«ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության զբաղվածության և աշխատանքային միգրացիայի բնագավառում օրենսդրության մոտարկման սկզբունքների մասին» համաձայնագրի նախագծի վերաբերյալ** առաջարկությունը, որով հայկական կողմը վերահաստատել էր նախկինում ներկայացված դիրքորոշումն առ այն, որ զբաղվածության բնագավառում օրենսդրության մոտարկմանն ուղղված պարտադիր բնույթ կրող փաստաթղթի ընդունումը վաղաժամ է: Նամակում նշվել էր նաև, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության զբաղվածության և աշխատանքային միգրացիայի ոլորտում օրենսդրության մոտարկման սկզբունքների մասին» համաձայնագրի նախագծում առանձին կոնկրետություն չկա, և դրանում խոսվում է ընդամենը օրենսդրության մոտարկման սկզբունքների մասին, առաջարկում ենք օրենսդրության մոտարկման վերաբերյալ դրույթները ձևակերպել ոչ թե բարձր իրավական ուժ ունեցող փաստաթղթի՝ համաձայնագրի ձևով, այլ «ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության զբաղվածության և աշխատանքային միգրացիայի ոլորտում օրենսդրության մոտարկման սկզբունքներ» անվանումով փաստաթղթով, որը կարող է հաստատվել ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության աշխատանքի, միգրացիայի և սոցիալական ապահովության հարցերով Խորհրդատվական

կոմիտեի և ԱՊՀ անդամ պետությունների միգրացիոն մարմինների ղեկավարների խորհրդի համատեղ որոշմամբ:»

Հայաստանի դիրքորոշմանը՝ Համաձայնագրի կնքման վաղաժամ լինելու վերաբերյալ կողմ էին արտահայտվել Ղազախստանը և Բելառուսը:

Հաշվի առնելով հարցի շուրջ ԱՊՀ երկրների շրջանում կոնսենսուսի և միասնական դիրքորոշման բացակայությունը, որոշվեց հետաձգել հարցի քննարկումը:

Օրակարգի կետ 8
«Մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածում ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության երրորդ փուլի (2016-2020թթ.) իրականացմանն ուղղված միջոցառումների ծրագրի» իրականացում

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մասնակցում է ծրագրով նախատեսված փաստաթղթերի մշակման և համաձայնեցման աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում իրականացվում է տեղեկատվության փոխանակում:

Հարցի վերաբերյալ ընդունվեցին հետևյալ որոշումները.

8. *Ի գիտություն ընդունել միջոցառումների ծրագրի կատարման մասին ԱՊՀ գործադիր կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվությունը:*

8.1. *Շարունակել «ԱՊՀ մասնակից պետությունների նախարարությունների և գերատեսչությունների մասնագետների ուսումնական այցերի և պրակտիկայի կազմակերպում՝ աշխատանքի, միգրացիայի և զբաղվածության ոլորտում հմտությունների կատարելագործման և փորձի փոխանակման նպատակով» միջոցառումների ծրագրի կատարումը:*

8.2. *Շարունակել «Համագործակցություն բնակչությանը սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտը կարգավորող իրավական դաշտի բարելավման հարցում» միջոցառումների ծրագրի կատարումը:*

8.3. *Շարունակել «Մասնագիտական ստանդարտների մշակման և կիրառման վերաբերյալ տեղեկատվական-մեթոդաբանական և նորմատիվ-իրավական նյութերի փոխանակում» միջոցառումների ծրագրի կատարումը և ՌԴ աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարությանը*

կազմակերպել ԱՊՀ մասնակից պետությունների՝ պրոֆեսիոնալ ստանդարտների ու որակավորման բնութագրերի մշակման և կիրառման փորձի ուսումնասիրություն: Առաջարկել շահագրգիռ ԱՊՀ պետություններին մասնակցել տվյալ հարցի շուրջ ուսումնասիրությանը և առաջարկությունների մշակմանը:

Օրակարգի կետ 9
«Ընդհանուր աշխատաշուկայի փուլային ձևավորման և աշխատուժի միգրացիայի կանոնակարգման 2017-2020թթ. առաջնային միջոցառումների» կատարման մասին տեղեկատվությունը ներկայացրեց Գործադիր Կոմիտեն:

Հարկ է նշել, ՀՀ առաջարկությամբ փաստաթղթի «Միջոցառման իրականացնողներ» բաժնում «ԱՊՀ մասնակից պետություններ» բառերից առաջ ավելացվել էր «շահագրգիռ» բառը:

Օրակարգի կետ 9.1
«Բնակչության առանձին խմբերի (երիտասարդներ, հաշմանդամներ, կանայք, և այլոք) աշխատանքի տեղավորման համար հնարավորությունների ապահովման հարցում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության ընդհանուր սկզբունքների» մշակման մասին

Որոշում. *Առաջարկել Խորհրդակցական խորհրդի անդամներին՝ մշակել առաջարկություններ և մինչև 2017թ. դեկտեմբերի 20-ը ԱՊՀ գործադիր կոմիտե ներկայացնել թեկնածություն փաստաթղթի նախագծի մշակման աշխատանքային խմբում ընդգրկելու համար:*

Օրակարգի կետ 9.2
«ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության զբաղվածության պետական ծառայությունների համագործակցության մասին համաձայնագրի» նախագծի մշակման մասին

Որոշում. *Առաջարկել Խորհրդակցական խորհրդի անդամներին՝ մշակել առաջարկություններ և մինչև 2018թ. փետրվարի 1-ը ԱՊՀ գործադիր կոմիտե ներկայացնել թեկնածություն փաստաթղթի նախագծի մշակման աշխատանքային խմբում ընդգրկելու համար:*

Օրակարգի կետ 9.3
Թափուր աշխատատեղերի առկայության, ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիների՝ միասնական ելքի ձևերով աշխատանքի տեղավորման հնարավորությունների ու պայմանների վերաբերյալ ԱՊՀ մասնակից

պետությունների տվյալների ազգային բազաների մշակման և կատարելագործման մասին

Որոշում. *Առաջարկել Խորհրդակցական խորհրդի անդամներին՝ շարունակել առաջնահերթ միջոցառումների իրականացումը:*

Օրակարգի կետ 9.4
Ազգային աշխատաշուկաների իրավիճակի վերաբերյալ ցուցանիշների համակարգի կատարելագործման մասին

Որոշում. *Ի գիտություն ընդունել ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի տեղեկատվությունը:*

Օրակարգի կետ 10
ԱՊՀ մասնակից պետությունների կողմից «Կենսաթոշակային ապահովության բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին» 1992թ. մարտի 13-ի համաձայնագրի իրականացմանն առնչվող հարցերի վերաբերյալ զեկուցեցին ԱՊՀ գործադիր կոմիտեն և ՌԴ աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարությունը: Զեկուցողները, մասնավորապես, նշեցին, որ հաշվի առնելով կենսաթոշակային ապահովության ոլորտում երկրների օրենսդրական դաշտում տեղի ունեցած փոփոխությունները և երկրների միջև ԱՊՀ շրջանակներում տվյալ ոլորտում միջպետական հարաբերությունների հետագա զարգացման վերաբերյալ փոխհամաձայնեցված դիրքորոշման բացակայությունը, նպատահարմար է համարվում կենսաթոշակային ապահովության ոլորտում համագործակցությունը զարգացնել երկկողմ պայմանագրերի շրջանակում: ՀՀ-ը ևս կողմ է այս դիրքորոշմանը:

Որոշում. *Ի գիտություն ընդունել ներկայացված տեղեկատվությունը:*

Օրակարգի կետ 11
Խորհրդակցական խորհրդի 31-րդ նիստի անցկացման վայրի, ամսաթվի և օրակարգի նախագծի վերաբերյալ զեկուցեց Գործադիր կոմիտեն:

Որոշում. *Ի գիտություն ընդունել ԱՊՀ գործադիր կոմիտեի տեղեկատվությունը և առաջարկել տաջիկական կողմին՝ տեղեկացնել Խորհրդակցական խորհրդի հերթական 31-րդ նիստի անցկացման ամսաթվի և վայրի մասին ոչ ուշ, քան նիստը սկսելուց վեց ամիս առաջ:*

2019թ. ԽԽ նիստը կանցկացվի Թուրքմենստանում:

Հանդիպման ընթացքում ներկայացվեցին նաև հետևյալ առաջարկները.

- Մոտ ապագայում ստեղծել համատեղ աշխատանքային խումբ աշխատող միգրանտների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հարցերը ուսումնասիրելու նպատակով (իրավական կարգավորումներ, միգրանտների հաշվառման միասնական համակարգ և այլն) – առաջարկվեց ՌԴ կողմից;
- Կազմակերպել տարեց անձանց հիմնահարցերին նվիրված ԱՊՀ երկրների կոնֆերանս՝ փորձի փոխանակման նպատակով – առաջարկվեց Բելառուսի կողմից;
- Մշակել առաջարկներ 2020 թվականին Հայրենական Մեծ Պատերազմի հաղթանակի 75-ամյակին նվիրված միջոցառումների վերաբերյալ – առաջարկվեց ՌԴ կողմից:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

- Հայաստանի Հանրապետության համար հատկապես հետաքրքրական էին աշխատանքի էլեկտրոնային բորսայի ստեղծման ուղղությամբ ԱՊՀ որոշ երկրներում (մասնավորապես՝ Ղազախստանում, Ռուսաստանի Դաշնությունում) տարվող և/կամ ավարտված աշխատանքները՝ հաշվի առնելով ՀՀ-ում սկիզբ առած նմանատիպ գործընթացը: Այս առումով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կուսումնասիրի ԱՊՀ երկրների լավագույն փորձը և կդիտարկի դրանք տեղայնացնելու հնարավորության հարցերը:
- Հաշվի առնելով, որ ՀՀ պետական քաղաքականության երկարաժամկետ հեռանկարային ուղղվածության մեջ առանձնանում և կարևորվում են ժողովրդագրական խնդիրները և մշակվում են մինչև 2040 թվականը ժողովրդագրական իրավիճակը բարելավելու ռազմավարական հայեցակարգերը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, լավագույն փորձի ուսումնասիրման և ՀՀ-ում տեղայնացման նպատակով, նախատեսում է համագործակցություն ծավալել ՌԴ Սանկտ Պետերբուրգ քաղաքի վարչակազմի հետ, որը բավականին մեծ փորձ ունի և հաջողություններ է գրանցել ինչպես տեղական, այնպես էլ դաշնային մակարդակով իրականացվող ժողովրդագրական և ընտանեկան քաղաքականության ասպարեզում, ինչպես նաև երեխաների հիմնահարցերի ոլորտում տարվող աշխատանքների առումով:

10. **Գործուղվողը**
    Արտեմ Ասատրյան

11. **Ստորագրությունը, ամսաթիվը**
    22.11.2017